# Արտարժույթի փոխարժեքի դինամիկայի ուսումնասիրությունը ՀՀ-ում վերջին տասնամյակում և սպասվելիք միտումները

*Հովհաննեսյան Ա. Ն.*
*Ղարիբյան Լ. Ա.*
*ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն (Հայաստան, Երևան)*
levon-gharibyan@mail.ru

**Վճռորոշ բառեր՝** արտարժույթի փոխարժեք, արտարժութային շուկա, դինամիկա, կանխատեսում, փոխարկելիություն

**Исследование динамики валютного курса в РА в последнее десятилетие и ожидаемые тенденции**

*Оганесян А. Н.*
*Гарибян Л.А.*
*НАН РА Научно-образовательный международный центр (Армения,Ереван)*
levon-gharibyan@mail.ru

**Резюме:** В статье исследовано динамика курсов свободно конвертируемых валют в РА, рассчитаны основные показатели динамики, модель прямой линии (полином первого порядка) и на этой основе прогнозированы курсы валют доллара США, Евро и Российского рубля с 2019 по 2023 гг.
**Ключевые слова:** валютный курс, валютный рынок, динамика, прогнозирование, конвертируемость.

**Research of the Currency Course Dinamics in RA in the Last Decade and Expected Trends**

*Hovhannesyan A. N.*
*Gharibyan L.A.*
*NAS RA International Scientific Educational Center (Armenia, Yerevan)*
levon-gharibyan@mail.ru

**Abstract:** The article explored the dynamics of freely convertible currencies in the Republic of Armenia, calculated the main indicators of the dynamics, the straight line model (a first-order polynomial), and on this basis, the exchange rates of the US dollar, Euro and Russian ruble from 2019 to 2023 were predicted.
**Keywords:** exchange rate, currency market, dynamics, forecasting, convertibility

Հայտնի է, որ արտարժութային շուկան ֆինանսական շուկայում առանցքային դեր ունի, որը կոչված է կարգավորելու վճարային շրջանառությունն առևտրային և ոչ առևտրային ոլորտներում, կառավարելու իրացվելիությունը արտարժույթներով, ներգործելու ազգային և միջազգային արժութային քաղաքականության վրա: Ինչպես գիտենք, ՀՀ կենտրոնական բանկի արժութային քաղաքականությունն ուղղված է Հայաստանի Հանրապետության արժութային պահուստների արդյունավետ կառավարման միջոցով ՀՀ դրամի հուսալիության ու միջազգային հեղինակության բարձրացմանը, ընթացիկ արժութային գործառնությունների և կապիտալի շարժի, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների համար բարենպաստ իրավատնտեսական դաշտի ստեղծմանը: Այդ նպատակների իրականացման համար հայտարարվել է համապատասխան արժութային ռեժիմ, մշակվել են արժութային համակարգի գործունեության սկզբունքները և սահմանվել օրենսդրական կարգավորման շրջանակները: Արտարժույթի փոխարժեքը իրենից ներկայացնում է մի երկրի արժույթի գինը (դրամական միավորը) ՝ արտահայտված մեկ այլ երկրի արժույթի միավորով[1]: Արտարժույթի փոխարժեքի գոյությունն որոշվում է ազգային դրամական միավորի առկայությամբ և միջազգային հարաբերություններում դրանց փոխանակման անհրաժեշտությամբ:

«Արժույթի փոխանակում» հասկացությունը կապված է նրա այնպիսի բնութագրիչի հետ, ինչպիսին է փոխարկելիությունը: Արժույթի

[1] Բայադյան Ա. “Ֆինանսական բացատրական բառարան”, Երևան, 2004, էջ 39-42:

փոխարկման աստիճանն՝ որոշվում է արտարժույթային գործառնությունների կարգավորման պետական մեխանիզմով: Արժույթը համարվում է ազատ փոխարկելի, եթե այդ արժույթի երկրում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ միավորների կողմից իրականացվող արտարժույթային գործառնությունների ժամանակ չեն կիրառվում ինչ որ սահմանափակումներ, և ոչ փոխարկելի, եթե այդ դրամական միավորի երկրում գործում են օրենսդրությամբ սահմանված սահմանափակումներ՝ արտարժութային գրեթե բոլոր գործառնությունների նկատմամբ: Մասամբ փոխարկելի է համարվում այդ երկրի արժույթը, երբ գործում է սահմանափակում որոշ տեսակի արտարժույթային գործառնությունների կամ այդ գործառնություններն իրականացնող որոշ մասնակիցների համար:

Արժույթի փոխարկման ազատությունը պետք է հենվի երկրի տնտեսության կայունության վրա, այսինքն՝ փոխանակման մեկ օրենսդրական թույլտվությունը բավարար չէ, անհրաժեշտ է արժույթի նկատմամբ վստահություն և երկրի տնտեսության կայացվածության գնահատում:

Հետևաբար, տվյալ երկրի արժույթի փոխարկելիությունը հնարավորություն է տալիս ազատ փոխանակվել արտարժույթներով և հակառակը՝ արժույթային շուկաներում արտարժույթային փոխանակումը՝ ազգային արժույթով:

Արժույթի շուկան արժույթի առք ու վաճառքի հարաբերությունների ամբողջություն է: Համաշխարային արժույթի շուկան ներառում է տարածաշրջանների և ազգային արժույթի շուկաները, որոնց ներսում և միջև կատարվող գործառնությունները իրականացվում են հեռահաղորդակցության ժամանակակից միջոցներով[2] :

ՀՀ-ում ԱՄՆ դոլարի,Եվրոյի, Ռուսական ռուբլու նակտմամբ ՀՀ դրամի պաշտոնական փոխարժեքը սահմանում է ՀՀ ԿԲ-ը՝ պետական բյուջեի եկամուտների և ծախսերի պետական բոլոր տեսակի վճարահաշվարկային հարաբերությունների, կազմակերպությունների և քաղաքացիների, ինչպես նաև հարկադրման և հաշվապահական հաշվառման հաշիվներում օգտագործելու նպատակով:

Ընդունվող գնանշումից կախված՝ արտարժույթի փոխարժեքները կարող են լինել ուղիղ և հակադարձ:

Ուղիղ գնանշման դեպքում սահմանվում է մեկ միավոր (100,1000) գնանշված արժույթին ընկնող արժույթ – չափիչի քանակը:

Հակադարձ գնանշման դեպքում օգտագործվում է հակառակ հարաբերությունները, այսինք հաշվարկվում է մեկ միավոր արժույթ չափիչին ընկնող գնանշված արժույթի քանակը:

Ներքոհիշյալ թիվ 1 աղյուսակում ներկայացված են տվյալներ մեկ ԱՄՆ դոլարի,Եվրոյի և Ռուսական ռուբլու ընթացիկ փոխարժեքների վերաբերյալ ՀՀ-ում 2009-2018 թթ.:

Թիվ 1աղյուսակում բերված տվյալներից ակնհայտ երևում է, որ ուսումնասիրվող ժամանակաընթացքում ԱՄՆ դոլարի և եվրոյի փոխարժեքները տարեց-տարի ունեցել են աճման տեմպեր, իսկ ռուսական ռուբլու փոխարժեքը՝ ընդհակառակը նվազման տեմպեր:

Եթե երկու արժույթների հակադարձ գնանշման ժամանակ օգտագործվում է միևնույն արժույթ-չափիչը, ապա այդ երկու արժույթների համար կարող է հաշվարկվել խաչաձև փոխարժեք:

Օրինակ՝ 2018 թ. միջին տարեկան փոխարժեքները կազմել են.

1ԱՄՆ դոլարը = 482.99դրամ
1ԱՄՆ դոլարը = 62.48 ռուբլի

այդ դեպքում՝ 1ռուբլին = $\frac{482.99}{62.48} = 7,73$ դրամ:

Հետևաբար խաչաձև փոխարժեքը հարաբերություն է երկու արժույթների միջև, որը որոշվում է դրանց գնանշմամբ՝ երրորդ արժույթի նկատմամբ: Գործնականում խաչաձև փոխարժեքը օգտագործվում է այնպիսի արտարժույթային գործառնությունների ժամանակ, երբ մեզ հետաքրքրող արտարժույթի ձեռք բերումը նախապես տեղի է ունենում միջանկյալ արտարժույթի գնմամբ, որով էլ և ձեռք է բերվում անհրաժեշտ արտարժույթը:

[2] Մովսիսյան Մ. “Ֆինանսների վիճակագրություն”, Երևան, 2008, էջ 225-248

*Աղյուսակ 1.Մեկ ԱՄՆ դոլարի,Եվրոյի և Ռուսական ռուբլու փոխարժեքները ՀՀ-ում 2009- 2018 թթ.*[3]

| | ԱՄՆ դոլար | ԵՎՐՈ | ՌՈ |
|---|---|---|---|
| 2009թ | 363.28 | 507.35 | 11.5 |
| 2010թ | 373.66 | 496.03 | 12.32 |
| 2011թ | 372.5 | 518.72 | 12.7 |
| 2012թ | 401.76 | 516.38 | 12.94 |
| 2013թ | 409.63 | 544.12 | 12.88 |
| 2014թ | 415.92 | 552.11 | 10.98 |
| 2015թ | 477.92 | 530.6 | 7.89 |
| 2016թ | 480.49 | 531.85 | 7.19 |
| 2017թ | 482.72 | 545.25 | 8.28 |
| 2018թ | 482.99 | 570.73 | 7.73 |

**Աղյուսակը կազմված է հեղինակների կողմից պաշտոնական վիճակագրության տվյալների հիման վրա:*

Արտարժույթի փոխարժեքի դինամիկայի ուսումնասիրությունը ներառում է հետևյալ հարցերը.

1. Հետազոտության ենթարկված շարքերի նախորդ զարգացումների ուսումնասիրությունը՝ դինամիկայի չափում և միջին մակարդակի որոշում:
2. Արտարժութի փոխարժեքի պատահական շարժերի վերլուծությունը:
3. Արտարժութի փոխարժեքի շարժերի վերլուծությունը:
4. Արտարժութի փոխարժեքի կանխատեսումը:

Դինամիկայի ուսումնասիրության համար օգտագործվում են դինամիկայի շարքերի վերլուծության հիմնական ցուցանիշները՝ աճի և հավելաճի տեմպերը, աճի և հավելաճի միջին տարեկան տեմպերը և այլն: Արտարժույթի փոխարժեքների շարքի միջին մակարդակը հաշվարկվում է շաբաթական և ամսական կտրվածքներով: Տարվա կտրվածքով տվյալները հաճախ չեն միջինացվում, այլ բերվում են ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Արտարժույթի փոխարժեքի դինամիկայի ընդհանուր միտումների և առանձին ժամանակաշրջաններում դրա առանձնահատկությունների բացահայտումը իրենից ներկայացնում է վերլուծության կարևոր խնդիրներից, որն ունի նաև կիրառական նշանակություն: Որոշ դեպքերում միտումները հատուկ ուրվագծվում են (հատկապես լավ է երևում աղյուսակներում, գծապատկերների վրա), որոշ դեպքերում, շարքի մակարդակների պատահական տատանումների հետևանքով՝ այն թաքնված է լինում: Արտարժույթի փոխարժեքի շարժը հաճախ այնքան տարերային է, որ կասկած է առաջացնում՝ արդյոք այդպիսի տարերային տատանումից կարելի է ժամանակի ընթացքում նկատել արտարժույթի փոխարժեքի մակար-դակի օրինաչափ շարժը, այսինքն՝ մինչև ընդհանուր օրինաչափության բացահայտումը, անհրաժեշտ է վերլուծել արտարժույթի փոխարժեքի պատահական շարժերը: Դրա համար օգտագործվում են վիճակագրական մեթոդների համակցություն՝ պատահականության չափանիշներ (ցուցանիշներ): Ժամանակի ընթացքում արտարժույթի փոխարժեքի ամբողջական փոփոխությունը բաղկացած է 3 բաղադրիչներից. երկարատև միտումներ (հիմնական), որը գործում է մի քանի տնտեսական ցիկլերի ընթացքում, շրջափուլային տատանումներ՝ արտարժույթի փոխարժեքի փոփոխություն, որպես տնտեսական ցիկլի ազդեցության հետևանք (փուլի փոփոխություն) և սեզոնային տատանում՝ արտարժույթի փոխարժեքի փոփոխություն, որպես սեզոնի փոփոխության հետևանք, որը կապված չէ հիմնական միտման և տնտեսական ցիկլի հետ:

Ներքոհիշյալ թիվ 2,3,4 աղյուսակներում մեր կողմից հաշվարկված և ներկայացված են մեկ ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուսական ռուբլու փոխարժեքների դինամիկայի հիմնական վերլուծական ցուցանիշները:

Մեկ ԱՄՆ-ի դոլարի նկատմամբ ուղիղ գծի հավասարումը առաջին աստիճանի պոլինոմի կիրառմամբ ունի հետևյալ տեսքը՝

$\hat{Y}t=15.85t+338.9$, իսկ դա նշանակում է, որ նշված ժամանակահատվածում միջինում 338.9 ԱՄՆ դոլարի պարագայում գրանցվել է տարեկան աճ 15.85 ԱՄՆ դոլարի չափով:

Մեկ Եվրոյի համար համապատասխանաբար կկազմի.

[3] «ՀՀ ֆինանսների վիճակագրություն 2018թ» ՀՀ ՎԿ տարեկան վերլուծական զեկույց

*Աղյուսակ 2.* Արտարժույթի փոխարժեքի դինամիկայի հիմնական վերլուծական ցուցանիշները 2009-2018թթ. մեկ ԱՄՆ դոլարի փոխարժեքի տվյալներով

| տարիներ | ԱՄՆ դոլար | բացարձակ հավելաճ | | աճի տեմպ,% | | հավելաճի տեմպ,% | | հավելաճի տեմպի 1 տոկոսի բաց. Ն2. | | Աճի միջին տեմպ, գ | | հավելաճի միջին տեմպ,% | | Բացարձակ հավելաճի միջին տեմպ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Բգ | 2ղթ | Բգ | 2ղթ | Բգ | 2ղթ | Բգ | 2ղթ | Բգ | 2ղթ | Բգ | 2ղթ | Բգ | 2ղթ |
| 2009թ | 363.3 | | | | | | | | | | | | | | |
| 2010թ | 373.7 | 10.38 | 10.38 | 1.029 | 1.029 | 2.9 | 2.9 | 3.63 | 3.63 | | | | | | |
| 2011թ | 372.5 | 9.22 | -1.16 | 1.025 | 0.997 | 2.5 | -0.3 | 3.63 | 3.74 | | | | | | |
| 2012թ | 401.8 | 38.48 | 29.26 | 1.106 | 1.079 | 10.6 | 7.9 | 3.63 | 3.73 | | | | | | |
| 2013թ | 409.6 | 46.35 | 7.87 | 1.128 | 1.020 | 12.8 | 2.0 | 3.63 | 4.02 | | | | | | |
| 2014թ | 415.9 | 52.64 | 6.29 | 1.145 | 1.015 | 14.5 | 1.5 | 3.63 | 4.10 | | | | | | |
| 2015թ | 477.9 | 114.64 | 62 | 1.316 | 1.149 | 31.6 | 14.9 | 3.63 | 4.16 | | | | | | |
| 2016թ | 480.5 | 117.21 | 2.57 | 1.323 | 1.005 | 32.3 | 0.5 | 3.63 | 4.78 | | | | | | |
| 2017թ | 482.7 | 119.44 | 2.23 | 1.329 | 1.005 | 32.9 | 0.5 | 3.63 | 4.80 | | | | | | |
| 2018թ | 483 | 119.71 | 0.27 | 1.330 | 1.001 | 33.0 | 0.1 | 3.63 | 4.83 | 1.032 | 1.032 | 3.2 | 3.2 | 13.3 | 13.3 |

*Աղյուսակ 3.* Արտարժույթի փոխարժեքի դինամիկայի հիմնական վերլուծական ցուցանիշները 2009-2018թթ.մեկ եվրոյի փոխարժեքի տվյալներով

| տարիներ | Եվրո | բացարձակ հավելաճի տեմպ | | աճի տեմպ, գ | | հավելաճի տեմպ,% | | հավելաճի տեմպի 1 տոկոսի բաց. Ն2. | | Աճի միջին տեմպ, գ | | հավելաճի միջին տեմպ,% | | բացարձակ հավելաճի միջին տեմպ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Բգ | Շղթ | Բգ | 2ղթ | Բգ | 2ղթ | Բգ | 2ղթ | Բգ | 2ղթ | Բգ | 2ղթ | Բգ | 2ղթ |
| 2009թ | 507.4 | | | | | | | | | | | | | | |
| 2010թ | 496 | -11.32 | -11.32 | 0.978 | 0.978 | -2.2 | -2.2 | 5.07 | 5.07 | | | | | | |
| 2011թ | 518.7 | 11.37 | 22.69 | 1.022 | 1.046 | 2.2 | 4.6 | 5.07 | 4.96 | | | | | | |
| 2012թ | 516.4 | 9.03 | -2.34 | 1.018 | 0.995 | 1.8 | -0.5 | 5.07 | 5.19 | | | | | | |
| 2013թ | 544.1 | 36.77 | 27.74 | 1.072 | 1.054 | 7.2 | 5.4 | 5.07 | 5.16 | | | | | | |
| 2014թ | 552.1 | 44.76 | 7.99 | 1.088 | 1.015 | 8.8 | 1.5 | 5.07 | 5.44 | | | | | | |
| 2015թ | 530.6 | 23.25 | -21.51 | 1.046 | 0.961 | 4.6 | -3.9 | 5.07 | 5.52 | | | | | | |
| 2016թ | 531.9 | 24.5 | 1.25 | 1.048 | 1.002 | 4.8 | 0.2 | 5.07 | 5.31 | | | | | | |
| 2017թ | 545.3 | 37.9 | 13.4 | 1.075 | 1.025 | 7.5 | 2.5 | 5.07 | 5.32 | | | | | | |
| 2018թ | 570.7 | 63.38 | 25.48 | 1.125 | 1.047 | 12.5 | 4.7 | 5.07 | 5.45 | 1.013 | 1.013 | 1.3 | 1.3 | 7.0 | 7.0 |

*Աղյուսակ 4.* Արտարժույթի փոխարժեքի դինամիկայի հիմնական վերլուծական ցուցանիշները 2009-2018թթ.մեկ ռուսական ռուբլու փոխարժեքի տվյալներով

| տարիներ | ՌՌ | բացարձակ հավելաճի տեմպ | | աճի տեմպ, գ | | հավելաճի տեմպ,% | | հավելաճի տեմպի 1 տոկոսի բաց. Ն2. | | Աճի միջին տեմպ, գ | | հավելաճի միջին տեմպ,% | | բացարձակ հավելաճի միջին տեմպ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | բգ | Շղթ | բգ | 2ղթ | բգ | 2ղթ | բգ | 2ղթ | բգ | 2ղթ | բգ | 2ղթ | բգ | 2ղթ |
| 2009թ | 11.5 | | | | | | | | | | | | | | |
| 2010թ | 12.32 | 0.82 | 0.82 | 1.071 | 1.071 | 7.1 | 7.1 | 0.12 | 0.12 | | | | | | |
| 2011թ | 12.7 | 1.2 | 0.38 | 1.104 | 1.031 | 10.4 | 3.1 | 0.12 | 0.12 | | | | | | |
| 2012թ | 12.94 | 1.44 | 0.24 | 1.125 | 1.019 | 12.5 | 1.9 | 0.12 | 0.13 | | | | | | |
| 2013թ | 12.88 | 1.38 | -0.06 | 1.120 | 0.995 | 12.0 | -0.5 | 0.12 | 0.13 | | | | | | |
| 2014թ | 10.98 | -0.52 | -1.9 | 0.955 | 0.852 | -4.5 | -14.8 | 0.12 | 0.13 | | | | | | |
| 2015թ | 7.89 | -3.61 | -3.09 | 0.686 | 0.719 | -31.4 | -28.1 | 0.12 | 0.11 | | | | | | |
| 2016թ | 7.19 | -4.31 | -0.7 | 0.625 | 0.911 | -37.5 | -8.9 | 0.12 | 0.08 | | | | | | |
| 2017թ | 8.28 | -3.22 | 1.09 | 0.720 | 1.152 | -28.0 | 15.2 | 0.12 | 0.07 | 0.957 | 0.957 | -4.3 | -4.3 | -0.4 | -0.4 |
| 2018թ | 7.73 | -3.77 | -0.55 | 0.672 | 0.934 | -32.8 | -6.6 | 0.12 | 0.08 | | | | | | |

Ŷt=6.25t+496.94, իսկ դա նշանակում է, որ նշված ժամանակահատվածում միջինում 496.94 եվրոյի պարագայում գրանցվել է տարեկան աճ՝ 6.25 եվրոյի չափով:

Մեկ Ռուսական ռուբլու համար համապատասխանաբար կկազմի.

Ŷt= -0.647t + 10.44, իսկ դա նշանակում է, որ նշված ժամանակահատվածում միջինում 10.44 ռուսական ռուբլու պարագայում գրանցվել է տարեկան նվազում 0.647 ռուսական ռուբլու չափով:

*Աղյուսակ 5.* Արտարժույթի հիմնական տեսակների փոխարժեքների կանխատեսումները ՀՀ-ում 2019-2023թթ.

| | ԱՄՆ դոլար | Եվրո | Ռուսական ռուբլի |
|---|---|---|---|
| 2019թ | 513.27 | 565.25 | 6.883 |
| 2020թ | 529.12 | 571.94 | 6.236 |
| 2021թ | 544.97 | 578.19 | 5.589 |
| 2022թ | 560.82 | 584.44 | 4.942 |
| 2023թ | 576.67 | 590.69 | 4.295 |

Այժմ կատարենք կանխատեսումներ ըստ արտարժույթի առանձին տեսակների ՀՀ-ում 2019-2023թթ. համար հիմնվելով վերոհիշյալում կատարված տրենդի հավասարումից[1]: Ներքոհիշյալ թիվ 5 աղյուսակում ներկայացված է արտարժույթի այդ երեք հիմնական տեսակների փոխարժեքների սպասվելիք մակարդակները:

Թիվ 5 աղյուսակի վերլուծությունից ակնհայտ է, որ մեկ ԱՄՆ դոլարի և մեկ եվրոյի փոխարժեքների սպասվելիք մակարդակները առաջիկա տարիներին ցուցաբերում են աճման միտումներ: Մեկ ԱՄՆ դոլարի փոխարժեքը 2023 թվականին կհասնի 576.67 դրամի, մեկ եվրոյինը՝ 590.69-ի: Ի տարբերություն ԱՄՆ դոլարի և եվրոյի փոխարժեքների ռուսական ռուբլու փոխարժեքը դրսևորում է կայուն նվազման միտումներ և այն 2023 թվականին կհասնի 4.295 դրամի:

**Օգտագործված գրականության ցանկ**


1. **Բայադյան Ա. Հ**. «Ֆինանսական բացատրական բառարան», Եր., 2004.
2. **Ազրիլյան Ա**. «Մեծ տնտեսագիտական բառարան» . Եր., 1997.
3. **Վարդանյան Գ.Վ**. «Էկոնոմետրիկայի հիմունքները», Եր., 2003
4. **Մովսիսյան Մ. Է**. «Ֆինանսների վիճակագրություն» . Եր., 2008.
5. **Салин В.Н.** «Статистика финансов». – М., 2003
6. **Погодина Т.В**. «Финансовый менеджмент». – М., 2015
7. «Система национальных счетов». 2008.
8. www.Armstat.am
9. www.cba.am


[1] Վարդանյան Գ. “Էկոնոմետրիկայի հիմունքները”, Երևան, 2003, էջ 56-90: